WIEN 7/1 30.12.98

ՆՈՐ-ԴԱՐ

№ 226 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 10 Դեկտեմբերի 1898 Հինգշաբթի, 10 Դեկտեմբերի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 226

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ:

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ):

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1899-ին կըհրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.:

Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ:

Խմբագրատունը գտնւում է Բոլշայա Վոզովսկայա № 20:

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի հասցէն՝ Тифлисъ, въ Редакцію «НОРЪ-ДАРЪ»
կամ Tiflis, (Caucase), Rédaction du journal «Nor-Dar»:

Ծանօթ.—Առաջիկայ 1899 թուականի համար նոր բաժանորդ գրուողը «Նոր-Դար» կըստանայ՝ բաժանորդ գրուելու օրից. վճարելով ընդամենը 10 րուբլի:

Այն բաժանորդները, որոնք մինչև առաջիկայ դեկտեմբերի վերջը բաժանորդ չեն գրուիլ, յունուարի 1-ից թերթ չեն ստանալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Սիբիրի շրջուն հովիւը:
Զուր ջանքեր: Բ.
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Ս. Էջմիածնից: Բագուից. Սալիանից: Նոր-Նախիջևանից:
Հայկական երեկոյթը Օդեսայում:
Հայոց թատրոն Բագւում:
Թղթակցութիւններ.—Պետերբուրգ, Ընտանեկան համալսարան:
Քաղաքական. — Կոնֆերենցիան անիշխանականների դէմ: Թիւրքիա: Ֆրանսիա:
Խառն լուրեր:
Հեռագրներ:
«Նոր-Դար»ի պատասխաններ.
Բանասիրական.—Պատ:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

ՍԻԲԻՐԻ ՇՐՋՈՒՆ ՀՈՎԻՒ

Ահա քանի ժամանակէ ի վեր հայ մամուլի մէջ, գլխաւորապէս «Նոր-Դար»-ում արծարծւում է Սիբիրում եղած հայերի համար մի այցելու հովիւ նշանակելու խնդիրը: Արդարև դա շատ ծանր և կարևոր խնդիր է և արժանի ամենալուրջ ուշադրութեան. ուստի և թող ներուի մեզ մի քանի խօսք ասել այդ խնդրի առթիւ:

Քրիստոսի այն պատուէրը, թէ այսուհետև գնացէք և քարոզեցէք ամենայն աշխարհ այն ամենը, ինչ որ ես աւանդեցի ձեզ, կարծես թէ բոլորովին գոյութիւն չունի հայ ժողովրդի, հայ եկեղեցականի համար: Մեր հոգևորականութիւնը ոչ միայն անծանօթ երկիրներ, անծանօթ ազգերի մէջ չէ գնում քարոզելու Քրիստոսի եկեղեցին, հապա բոլորովին անտարբեր է գտնում դէպի այն փորձերը, որ անում են օտարադաւանները հայ եկեղեցու գրկից կորզելու նրա զաւակներին: Մենք, անշուշտ, շատ ցաւում ենք, որ հայ եկեղեցու զաւակներն օտարանում են իրենց մայրենի եկեղեցուց, բայց և ոչ մի միջոց չենք գործ դնում դրա առաջն առնելու համար, հապա ձեռներս ծալած նստում ենք և ողբում միայն: Մի կողմից տեսնում ենք եւրոպական ազգեր, այն էլ լուսաւորուած, քաղաքակրթուած ազգեր, որոնք թէև նոյն իսկ իրենց մէջ բազմաթիւ և և բազմատեսակ գործունէութեան ասպարէզ ու միջոց ունին, բայց և այնպէս միսիոնարութիւն են հիմնում, կանոնաւոր կազմակերպութիւններ հաստատում, որպէս զի քրիստոնէութիւնը ուրիշ երկիրների ու հեթանոսների մէջ սարածեն: Ճշմարիտ է, նրանք շատ անգամ ի չարն են գործ դնում իրենց այդ ներքին մղումը, որ միսիոնարութեան է դրդում նրանց և փոխանակ հեթանոս ազգերի՝ հայի նման հին քրիստոնեայ ժողովրդի մէջ են մտնում ու քրիստոնէական սիրոյ ու խաղաղութեան փոխարէն եղբայրական ատելութիւն ու պառակտումն սերմանում, ճշմարիտ է, թէև նրանք շատ անգամ փոխանակ համոզման ոյժի գործ են դնում փողի ոյժը, օգտւում են հայի թշուառութիւններից, բայց չի կարելի չհաւանել նրանց գործունէութեան հիմնական գաղափարին —միսիոնարութեանը: Հայի մէջ ոչ մի նշոյլ չէ երևում միսիոնի, առաքելութեան: Երբ որ այս ինչ կամ այն ինչ տեղում օտար միսիոնարներ են երևում և հայեր որսում, նոր յիշում ենք, թէ կարող էինք այդ տեղերում մեր ոյժերով նպաստել, նոր յիշում ենք, թէ ժողովուրդն այդ տեղերքում կարօտ էր հոգածութեան: Բայց մինչդեռ հնում մենք ունեցել ենք ներքին միսիոնարութիւն, առաքելութեան, որի կեդրոնավայրը մեր վանքերն են եղել: Դեռ շատ վաղ, հինգերորդ դարում, մտաբերենք ս. Մեսրոբին, նրա աշակերտներին ու ընկերներին. ի՜նչ վեհ առաքելութիւն, ի՜նչ զօրեղ առաքելութիւն էր դա: Մենք կարծես թէ այդ մարդկանց սերունդը չլինենք—այնքա՜ն մեծ տարբերութիւն կայ մեր մէջ: Բայց և որքա՜ն մեծ կարիք կայ ներքին առաքելութեան: Թողնենք այն երկիրները, որ կեանքի անապահովութեան պատճառով մենք սիրտ չենք անում մտնելու. բայց վերցնենք նոյն իսկ այնպիսի տեղեր, ուր կեանքի կատարեալ ապահովութիւն կայ. մնում է միայն աստանդական թափառելու նեղութիւնը: Բայց այդ նեղութիւնները ի՞նչ են համեմատելով այն վարձատրութեան, այն բարոյական վարձատրութեան հետ, որ միսիոնարը պիտի ստանայ իր պարտականութիւնը կատարած լինելու գիտակցութիւնից:

Վեր առնենք հենց առաջին օրինակը, Սիբիրը:

Կար մի ժամանակ, երբ միայն Սիբիրի անունը մարդու մարմինը փշաքաղում էր, մարդու վրայ ահ ու սարսափ ձգում: Սիբիրը աքսորատեղի էր լոկ և այնտեղի բնակիչներին երևակայում էին խիզախ աւազակներ, անլսելի ոճրագործներ, մի խօսքով մարդկութեան մրուրը, տեղը կազմող մի տարրով լի ճահիճ: Բայց վաղուց է արդէն մենք այդ հայեացքը չունենք այդ խնդրի վրայ.—Սիբիրն էլ նոյնպիսի երկիր է, ինչպէս և ամեն մի երկիր և այնտեղ ճանապարհորդելն ամենևին ոչնչով աւելի վտանգաւոր չէ Ղազախում կամ Ղարաբաղում ճանապարհորդելուց...: Մեզ արդէն լաւ յայտնի է, որ Սիբիր գնում են ապրելու և գործելու ոչ միայն դատապարտեալները, այլ և ազատ մարդիկ: Իսկ յայտնի է, ո՛րտեղ մի քանի մարդ կայ, այնտեղ անպատճառ մի հայ էլ կլինի: Հացի խնդիրը հայրենիք չէ ճանաչում. «որտեղ հաց, այնտեղ կաց» ասում է ազգային առածը և աւելացնում՝ «որտեղ պանիր, այնտեղ բանիր»...: Արդէն այն նկատմամբ, որ Սիբիրում ապրող ազատ հայեր կան, որոնք կարիք ունին հոգևոր մխիթարութեան, ո՛ր մնաց, որ իբրև Ռուսիոյ ընդարձակ և լայնածաւալ պետութեան աքսորավայր, այնտեղ հաւաքուած կլինին նաև բաւական մեծ թուով հայեր, աքսորուած, դատապարտուած հայեր... որոնք առաւել, քան ո՛վ և իցէ կարիք ունին սփոփանքի:

Եւ արդարև. այդ մարդիկը կամայ թէ ակամայ յանցանք են գործել, գուցէ և չեն գործել և աքսորուել են. նրանց յանկարծ խլել են իրենց սիրելիների շրջանից՝—անշուշտ նրանք էլ ունէին իրենց սիրելիները՝ հայր, մայր, քոյր, եղբայր, կին, զաւակ, ազգական ու բարեկամ՝—իրենց սիրելի երկրից՝ սարից ու ձորից. արտից ու անտառից, այգիներից, իրենց սրբավայրերից՝ վանքից ու եկեղեցուց, գերեզմաններից ու ուխտատեղիներից, կտրել են նրանց իրենց աւանդական ադաթներից, խաղից ու տաղից, երգից ու պարից... ու ձգել մի այնպիսի երկրի մէջ, ուր ամեն ինչ օտար է, ամեն ինչ խորթ է նրանց համար—օդն ու ջուրը, վայրքն ու բարքը, լեզուն ու հաւատը, մի խօսքով ամեն ինչ: Կարո՞ղ է դրանից աւելի մեծ պատիժ լինել. կարելի է երևակայել մի այլ քաւարան՝ խօսքի ամենաընդարձակ իմաստով. միթէ մի այդպիսի կեանքի լոկ մի տարին բաւական չէ մոռանալու համար այն բոլոր յանցանքները, որ մարդս գործած է՝ ինչպէս ասացինք՝ գիտակցութեամբ կամ անգիտութեամբ, կամաւ թէ ակամայ: Միթէ մարդկային խիղճը, մարդկային բանականութիւնը թոյլ կըտայ այդ թշուառ արարածներին թողնել բոլորովին անուշադիր, լիովին կոյր բաղդի բերմունքին յանձնուած: Բայց մենք թողել ենք. խզել ենք նրանցից մեր կապը, մատնել ենք անտէրութեան թէ՝ թող իւրաքանչիւր իր գլխի ճարը տեսնէ: Բայց լաւ է դեռ, եթէ նրանք ինքնուրոյն, կամքի տէր մարդիկ են: Սակայն քանի՞ հոգի կարող են այդպէս լինել և դիմանալ ճակատագրի անողոք հարուածներին՝ — նրանք յուսակտուր, նրանք աշխարհից մոռացուած արդեօք աւելի չպիտի խստանան և յանցաւոր միտումների անձնատուր լինին և չպիտի կորչին չենք ասում որպէս հայ, այլ և որպէս մարդ...: Մինչդեռ գուցէ մի քանի մարդավայել խօսք, մի երկու այցելութիւն, մի քիչ սփոփանք կարող լինէին նրանց ազատել վերջնական անկումից, վերջնական կորստից:

Եւ արդարև. վեր առէք Սիբիրի խորքերում տանջուող տասնեակ հազարաւոր վերստերի վրայ ցրուած մի քանի հայեր, որոնք ձմեռային հողմակոծ բուքի բռնուած անցւորականի նման մոլորուած մնացել են և ոչ իրենց արածը գիտեն և ոչ անելիքը. անցեալից բոլորովին կտրուած, ներկայում մոլորուած, անյոյս ապագայի առաջ կանգնած մնացել են մենակ, բոլորովին մենակ...: Յանկարծ մի օր, մի երջանիկ օր տեսնում են հայ հոգևորականը աւետարանի խօսքերը շրթունքներին մեղմ մրմնջելով, սիրով և համակրութեամբ մօտենում է նրանց. խօսում է հետները իրենց սիրելիների լեզուով, քաջալերում է, յուսադրում, գոյութեան մի նպատակ ցոյց տալիս նրանց...: Կարո՞ղ էք երևակայել այդ յուսակտուր մոլորեալի դրութիւնը: Ի՞նչ ուրախու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏ

ՕԿՏԱՒ ՄԻՐԲՕ

Հայր Ռիվոլի բակը շրջապատուած էր պատով որի մօտով մեծ ճանապարհն էր անցնում: Այդ պատը քայքայուած էր. անձրևները, ծառերի արմատները, անցորդները, շրջակայքի պահապանի թիակը փոքր առ փոքր քերել ու քանդել էին նրա հիմքը. բաց քարերը միմեանց թոյլ էին բռնում պատի մէջ, տեղ տեղ բացուածքներ էին գոյացել: Այդ հին աւերակը զուրկ չէր գեղեցկութիւնից: Նրա բարձրում տատանւում էր լուրջ-շուշանը՝ ճեղքուածներում կուչ էին եկել դաշտային ծաղիկներ, իսկ մանր քարերի արանքներում հպարտ ցցուել էր կարմիր պուտը: Բայց հայր Ռիվոլին այնքան էլ զգայուն չէր դէպի այդ բոլորը. ընդհակառակը, պատը ուշադրութեամբ դիտելով, քարերը, որպէս ծնօտի մէջ փտած ատամներ, շօշափելով, վճռեց պատը նորոգել: Որմնադիր նրան հարկաւոր չէր, ինքն ամեն բան գիտէր: Երբ հարկաւոր լինի նա կարող է և՛ կիր շաղախել, և՛ տախտակներ յղկել և երկաթի կտոր ծեծել մի իր շինել, և կոճերը տաշել... իսկ որմնադիրը բանը կըշինէ, իսկ շուտ և լաւ կըշինէ արդեօք—այս էլ հարց է... Եւ այսպէս ծերունին կիր ու աւազ գնեց, իր մօտ եղած քարերը ճանապարհի վրայ մի տեղ հաւաքեց և գործը սկսեց: Սակայն նա դեռ մի թի ցեխ էլ չէր վերցրել, որ առաջին պատահած բացուածքը կալնի, երբ լսեց մի խիստ ձայն:

—Է՜յ, հայր Ռիվոլի, այդ ի՞նչ էք ուզում շինել:

Դա ճանապարհի վերակացու պահապանն էր, որ իր առաւօտեան զբօսանքն էր կատարում: Նա շալակել էր երկրաչափական գործիքներով լիքը մի պայուսակ, իսկ կռան տակն ունէր երկու հատ կարմիր ու սպիտակ ներկած փոքր տախտակներ:

—Այ, այ, կրկնեց նա, ընդունելով Կարգապահութեան արժանի անփոյթ դիրքը, և դուք այդ տարիքում օրինազանց էք լինում: Ամօթ է, ամօթ, հայր Ռիվոլի: Այդ ի՞նչ էք շինում, է՛:

Ծերունին պատասխանեց.

—Ի՞նչ է որ: Պատս նորոգում եմ: Դուք էլ էք տեսնում թէ ինչ դրութեան մէջ է:

—Այո՛, ես այդ տեսնում եմ: Իսկ դուք այդ բանի համար թոյլտուութիւն ունի՞ք, թոյլտուութիւն...

Գիւղացին վախեց և մինչև անգամ շփոթուած տեղից վեր կացաւ:

—Դուք ասում էք թոյլտուութիւն: Իսկ միթէ հարկաւոր է: Չէ որ այս պատն իմ սեփականութիւնն է, ինչպէս կամենամ, այնպէս կանեմ: Կուզեմ բոլորովին կըքանդեմ, կուզեմ նորը կըշինեմ: Միթէ այսպէս չէ:

—Անհասկացող մի ձևանք, հայր Ռիվոլի, իբր թէ դուք չգիտէք թէ բանն ինչումն է:

—Այնուամենայնիւ ես ձեզ հարցնում եմ,—յամառում էր ծերունին,—այս պատը իմս է թէ ոչ: Եթէ իմս է, էլ ես ո՞ւմ պէտք է հաշիւ տամ:

—Պատը, իհարկէ, ձերն է, բայց դուք մոռանում էք, որ ճանապարհի վրայ է, ուստի դուք իրաւունք չունիք առանց իշխանութեան թոյլտուութեան ձեռք տալ:

—Բայց դուք տեսնում էք, որ քանդւում է: Եթէ ես այսպէս թողնեմ, մի գեղեցիկ օր կարող է դիակի պէս գետին գլորուել:

—Կարող է, բայց դա ինձ չէ վերաբերում. միայն ես արձանագրութիւն պէտք է կազմեմ՝ մէկ՝ որ դուք պատի նորոգութիւնն սկսել էք առանց թոյլտուութիւն ստանալու, երկրորդ՝ դուք նոյնպէս առանց պատշաճաւոր թոյլտուութեան բանուկ ճանապարհի վրայ դարսել էք շինութեան պիտոյքները: Դրա համար դուք 50 էկիւի տուգանքի էք ենթարկւում: Այո, հայր Ռիվոլի, կարծեմ դուք այլևս անհասկացող չէք ձևանալ:

Ծերունին զարմանքից մինչև անգամ բացեց իր սև, անատամ բերանը, սակայն առանց մի բան արտասանելու: Աչքերը աչքակապիճների մէջ փոքրիկ գնդակների պէս պտոյտ եկան: Մի քանի վայրկեանից մի փոքր ուշքի եկաւ, գլխարկն աչքերը ձգեց, հոգւոց քաշեց ու ասաց:

—Յիսուն էկիւ... Տէր Աստուած միթէ կարելի բան է:

Իսկ ճանապարհի հսկողը շարունակեց՝

—Այդ դեռ բոլորը չէ. դուք պարտաւոր էք ձեր պատը նորոգել:

—Չէ, յիսուն էկիւ չարժէ: Թողը տանի. ես այլ ևս այդ պատին ձեռք չեմ տալ:

—Իսկ ես կրկնում եմ՝ դուք պէտք է անպատճառ նորոգէք, որովհետև կըքանդուի և ճանապարհը կըփչացնէ. եթէ այդ բանը պատահի, ես ձեզ վրայ նոր արձանագրութիւն կըկազմեմ և դուք հարիւր էկիւ տուգանքի կենթարկուէք, չըհաշուելով և այն, որ ձեր պատը քանդուելով կարող է իր բակը ձգել կով, մարդ, իսկ այն ժամանակ ձեզանից անվերջ վնասներ կըպահանջուին:

Հայր Ռիվոլին բոլորովին ձեռքից գընաց:

—Հարիւր էկիւ..., վնասներ... դժբաղդութիւն, դժբաղդութիւն: Ինչպիսի ժամանակումն ենք ապրում:

—Տէր կամակոր, ամենից առաջ ինձ լսեցէք. ամենից առաջ թաղապետին տասերկու սու արժող թղթի վրայ գրած թիւն, ի՜նչ մխիթարութիւն պիտի լինի նրանց համար, տեսնելով, զգալով, որ թէև յանցաւոր, բայց դեռ հայ հասարակութեան անդամ է համարւում ինքը, թէև տասնեակ հազարաւոր վերստ հեռու ընկած, այլ դեռ չէ մոռացուած, հայ հոգևորականը չի մոռացած իրեն...։ Երևակայեցէք այդ հաւատացեալ հային, որ իւր մայրենի եկեղեցու արարողութիւնները նորից լսում է, հաղորդւում է արժանանում է հաղորդուել այն պատարագին, որ իւր բազմաթիւ հայ եղբայրների ներկայութեամբ իւր հայրենի երկրում է կատարուել. . ։ Զգո՞ւմ էք այդ բարերար ազդեցութիւնը անյուսութեան մատնուած հայի համար...։ Միթէ սա անհետք կըմնայ. միթէ դա չի զարթեցնիլ նրա մէջ գոյցէ քնած գեղեցիկ ըզգացմունքները, միթէ դա չի ազդիլ, չի նպաստիլ նրա բարոյական վերածննդեան։

Անշուշտ։

Բայց ո՞վ պիտի յանձն առնէ այդ ներքին առաքելութիւնը, որը թէև բաւական դժուար, բայց և նոյնքան վեհ է։ Ի հարկէ հայ հոգևորականը, քանի որ դա արդէն մի կազմակերպուած մարմին է և այն՝ յատուկ այդպիսի նպատակներով։ Այդ բանը աւելի ևս վերաբերւում է կուսակրօն հոգևորականութեանը, որը աշխարհային ոչ մի հոգս չունենալով, ազատ է իւր գործառնութիւնների մէջ. Նա բառի բուն նշանակութեամբ առաքեալ է, կամ գոնէ այդ պիտի լինէր. Նա պարտաւոր է գնալու այնտեղ, ուր որ կարիք կայ, ուր որ կարող է օգտակար լինել ժողովրդին, հայ հասարակութեանը։ Բայց մենք կուսակրօն հոգևորականութեան համար ազատ է իւր գործառնութիւնների մէջ ասելով չուզեցինք հասկացնել, որպէս թէ նա իւր գլխի տէրն է. ոչ. Նա արդէն հանդիսաւոր երդումով պարտաւորուած է հնազանդ լինել իւր պետին, իւր մեծաւորին։ Նա կը գնայ այնտեղ, ուր որ կուղարկեն, ուր որ ցոյց կը տան և ոչ ոք իրաւունք չունի տրտնջալու ոչ աշխարհային նեղութիւնների, ոչ կեանքի դառնութիւնների և ոչ իւր անկարողութեան վրայ. Նա պիտի անէ այն՝ ինչ որ հրամայւում է, ինչքան իւր ոյժերը թոյլ կը տան... Սակայն մինչև այսօր չերևցաւ մեր կուսակրօններից Սիբիրում. չգնացին մխիթարելու, սփոփելու արդարև մխիթարութեան և սփոփանքի կարօտ ճշմարիտ թշուառներին... որովհետև մինչև օրս չէ եղած մէկը, որ այդ մասին հոգար, չէ եղել մի մեծաւոր, որ իւր ստորադրեալին ուղարկէր հարկաւոր տեղը. մինչև այժմ մեր կուսակրօն հոգևորականների գործունէութեան շրջանը եղել են վանքերի վանահայրութիւնը, գործակալութիւններ, յաջորդութիւններ և առաջնորդութիւններ, այն էլ լոկ ձևական պաշտօնավարութիւն մեծ մասամբ. իսկ բուն առաքելութեան պաշտօնը մոռացուած է եղել։

Ահա արդէն ժամանակ է մտածելու, կանոնաւորելու ներքին առաքելութեան գործը և ի գործ հրաւիրելու մեր ոյժերը, որոնք քնած են, թմրած են. ժամանակ է կազմակերպելու շրջուն քարոզիչների խումբ, քարոզչական մի պաշտօն որոշելու տեղերի համար, ուր որ կարիք է զգացւում...։

Արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ներքին առաքելութեան գործին կարող են և պէտք է մասնակից լինին նաև քահանաները, բայց նրանք ծանրաբեռնուած լինելով աշխարհային հոգսերով, նրանց գործունէութիւնը սահմանափակուած պիտի լինի աւելի նեղ շրջաններում, իրենց բնակութեան տեղերում։ Հօ կարելի չէ՞ պահանջել, որ թողնեն տուն, տեղ, ընտանիք և թափառեն մի տեղից միւս տեղ, չատ է նաև այն, որ նրանք սրտանց և եռանդով կպչին իրենց հովուութեան յանձնուած հօտի մէջ բարոյական սկզբունքներ, եղբայրասիրական կապեր հաստատել ու պահպանել։ Եւ նրանք կարող են այդ բանն անել, որովհետև միշտ ժողովրդի մէջ են, ժողովրդի հետ են...։ Վարդապետները, և առ հասարակ շրջուն քարոզիչները սերմեր են ձգում, իսկ քահանաները ջրում են և աճեցնում այդ սերմերը, շրջուն քարոզիչները զգացմունքներ են շարժում, առ ժամանակ մի բաղխում ժողովրդի գեղեցիկ զգացմունքների լարերը, իսկ քահանաները շարունակում են։ Եւ ընդհակառակն քահանաները սկսում են բարի գործը, շարունակում, իսկ շրջուն քարոզիչներն իրենց խօսքով դրդիչ հանդիսանում, զարկ են տալիս գործին։ Մի խօսքով այդ երկու տարրերը, որ իսկապէս մի տարր են կազմում—հոգևոր զինուորութիւն, լրացնելու են իրար, օժանդակ ոյժեր են ներկայացնելու իրար։

Բայց դժբաղդաբար, քահանայական դասը սովորաբար թշնամաբար է վերաբերւում դէպի վարդապետները, նայում են նրանց վրայ իբրև տիրող, իշխանութիւն ունեցող մարմնի վրայ, բայց ոչ ընկերի վրայ։

Սա ցաւալի է ի հարկէ և պէտք է ամեն կերպ աշխատել՝ դրա առաջն առնելու համար։

Եասսող

Ս. Էջմիածին.

ՋՈՒՐ ՋԱՆԲԵՐ

Բ.

Սոյն յօդուածի առաջին մասում, մենք խօսեցինք այն զուարճութիւնների մասին, որոնք վերաբերւում են շատ թէ քիչ ապահովուած և զարգացած քաղաքացուն։ Այժմ ևս մի քանի խօսք հասարակ դասակարգի վերաբերեալ։

Չարիքներ կան, որոնք առաջանում են թէ տգիտութիւնից և թէ պարապութիւնից։ Պարապութիւնն է ստիպում դիմելու օղուն։ Ովքան ծանր և անախորժ տպաւորութիւն է թողնում, երբ երեկոները փողոցի միջով անցնում է հարբածների խումբը աղաղակներով, գոռում գոչումներով, հայհոյանքներով և իրենց ճաշակին համապատասխան վայրենի միւզիկով։ Ինչ են ներկայացնում դրանք այդ րոպէին։ Դրանք մարդիկ են, բայց մարդկութիւնը կորցրած։ Սպանութիւն, գողութիւն, բռնաբարութիւն և այլ, չարագործութիւններ առաջանում են մեծ մասամբ արբեցողութիւնից, որը հետևանք է պարապութեան։ Խորհուրդներով, քարոզներով ոչինչ չէք շինիլ, Այդ զուր ջանքեր կըլինին։ Հէնց այն արբեցողը, որին դուք կըքարոզէք՝ որ չխմի, կարող է ձեզնից աւելի լաւ քարոզել, որովհետև ինքը փորձով մօտ ծանօթ է արբեցութեան ծանր հետևանքներին։

Արբեցողութեան պատճառները կարող են լինել անգործութիւնը, աղքատութիւնը և մանաւանդ պարապ ժամանակներում զուարճութիւնների բացակայութիւնը։ Քաղաքացին ինքն ըստ ինքեան կարող է իւր համար զուարճութիւններ ստեղծել, բայց բանւոր դասակարգը այդ չի կարող անել, թէպէտ և կարող էր, եթէ նրա մակերևոյթը մի քիչ բարձր լինէր։ Հետևապէս նոյն քաղաքացին պիտի մտածի նաև իւր համար բանող դասակարգի մասին։ Այդ դասակարգին ևս պիտի տալ զուարճութիւններ, բայց այն տեսակի, որոնք զարգացնեն թէ նրանց ուղեղը և ճաշակը գրաւելով նըրանց միտքն ու հոգին։ Թատրոն ժողովարան, դասախօսութիւններ, երաժշտական երեկոյթներ և այլն անհրաժեշտ պիտի լինի բանւորական դասակարգին։ Փոխանակ այդ միջոցների, տեղ տեղ բացւում են թէյատներ, կարծէք թէ խմողը մի Տանդալէ, որը խմում է ու խմում և իւր ծարաւը չի յագեցնում։ Ոչ, խմողը չի խմում լոկ խմելու համար, Այլ արհեստական միջոցով ցանկանում է ուրախ դրութեան մէջ ընկնել. Փոխանակ նրա այդ շատ բնական կարիքը լրացնելու, մենք նրան կամ քարոզներ ենք կարդում, որը միայն քուն է բերում մարդու վրայ, կամ թէ չէ դիմում ենք այնպիսի միջոցների, որոնք միանգամայն անհամապատասխան են բանւոր դասակարգի պահանջներին։

Այդ բանում մեզ գրքոյկներ չեն հարկաւոր, այլ հարկաւոր են հասարակական գործիչներ։ Հասարակական գործիչներ մենք շատ չունինք։ Եթէ կան, դրանց մեծագոյն մասը համապատասխանում «գործիչ» լայն մտքին։ Բայց ամեն մի փողոցում կըգտնէք անխիղճ մարդիկ, որոնք հասարակական գործունէութիւնն էլ պատրւակ են դարձնում, որպէս զի դիրք ձեռք բերեն և իրենց շահերն առաջ մղեն։ Թողնենք այդ խառնիճաղանճներին, որոնց համար հասարակական շահերն այնքան են թանգ, որքան թանգ կարող են լինել կատուի շահերը մկների համար։

Այդպիսով, ուրեմն, եթէ մեզ աջողուի գոնէ քաղաքներում զուարճալի և օգտաւէտ կերպով մեր ազատ ժամերն անցկացնել մենք դրանով շատ չարիքներ կը խափանենք։ Իսկ զանազան քարոզներով, խրատներով չարիքը չի անհետանայ, կըկնում ենք, դրանք զուր ջանքեր կը լինին։

Ի. Մ.-Ա.

ՔՐՈՆԻԿՈՆ

«Կաւկազ»-ում տպուած է հետևեալ հեռագիրը.

ԲԱԹՈՒՄ, 8 դեկտեմբերի.—Կայսերական գնացքը, որով Բորժոմից հաճեց մեկնել Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ, ռուսաց նաւագնացութեան նաւահանգիստը ժամանեց այսօր, առաւօտեան ժամը 9-ին։ Կանաչով և ազգային դրօշակներով շքեղօրէն զարդարուած նաւահանգիստը բառիս բուն նշանակութեամբ լցուած էր ժողովրդով, որը վաղ առաւօտից հաւաքուած էր այստեղ, պաշտելի Թագուհուն և Իւր Օգոստափառ Դստերը դիմաւորելու համար։ Գնացքն ընդունուեց երկարատև «ուռա» աղաղակներով։ Գնացքի ժամանելուց յետոյ Նորին Մեծութեանը բաղդ ունեցան ներկայանալու Կովկասի կառավարչապետ և Կովկասի զինուորական շրջանի զօրքերի հրամանատար գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Ս. Գոլիցինը, Քութայիսի նահանգի կառավարիչ փոխ-նահանգապետ Գ. Գ. Միկլաշևսկին, Միքայէլեան բերդի կոմենդանտը և տեղական իշխանութեան ուրիշ ներկայացուցիչներ։ Գնացքը ժամանելուց կէս ժամ յետոյ Թագուհի Կայսրուհին Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ հաճեց մտնել Կովկասի Օգոստափառ Հիւրերին սպասող «Շտանդարդ» զբօսանաւը։ Զբօսանաւի վրայ Նորին Մեծութեանը բաղդ ունեցան ներկայանալու պրինցեսս Միւրատն իւր աղջկայ հետ։ Օրուայ ժամը 12-ին 30 րոպէին, բարձրաձայն «ուռա» աղաղակների մէջ, «Շտանդարդ» զբօսանաւը խարիսխը հանեց և ուղղուեց դէպի Նովոռոսիյսկ։

—

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Ս. Գոլիցինը դեկտեմբերի 9-ի գիշերը Բաթումից վերադարձաւ Թիֆլիս։

—

Ի լրումն ռուսաց ծխական դպրոցներ բանալու և պահպանելու համար ներկայումս յատկացրած գումարների, մայրաքաղաքի թերթերի ասելով, 1899 թ. յունուարի 1-ից արքունի գանձարանը կը յատկացնի նաև 50,000-ական ռուբլի տարեկան։

—

Ֆինանսների մինիստրութիւնը, մայրաքաղաքի թերթերի ասելով, վերջնականապէս վճռել է 10 ռուբլանոց ոսկէ դրամներ մտցնել գործածութեան մէջ։

—

Մտադրութիւն կայ ռուսական երկաթուղիների ծառայողներին տօն օրեր հանգստութիւն տալ։ Այդ նպատակով ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը արքունի և մասնաւոր բոլոր երկաթուղիների վարչութիւններին առաջարկել է իրենց դիտողութիւնները ներկայացնել։

—

Կոյրերի օգտին Թիֆլիսի զինուորական թանգարանում տեղի ունեցած փոքրագիր նկարների ցուցահանդէսի մասին մեզ ուղարկուած հաշուից, քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Ցուցահանդէսը բաց էր երկու շաբաթ (նոյեմբերի 1-ից)։ Այդ ժամանակամիջոցում յաճախել են հասակաւոր մարդիկ 934 և դըպրոցական աշակերտներ 412 հոգի։ Ծախք եղել է ընդամենը 180 ր. 37 կ., իսկ զուտ եկամուտն է 2,868 ր. 73 կ.։ Ամենախոշոր նուիրաբերութիւնը ցուցահանդէսի բացման առթիւ արել է պ. Ա. Մանթաշեանը (1000 ր.), իսկ ցուցահանդէսին նկարներ մատակարարելու գործում ամենամեծ օգնութիւնը ցոյց է տուել տիկին Ս. Փ. Ֆոն-Պարկաու։

—

Ֆինանսների և երկրագործութեան մինիստրութիւնների մէջ, զեմստվոներից մէկի ձեռներէցութեամբ, խնդիր է յարուցւում գիւղական բանկեր հիմնելու գիւղատնտեսներին և գիւղացիներին օգնելու համար։ Գիւղական բանկերի դրամական շրջանառութիւնը մեծ չի լինելու։

—

Հինգշաբթի, դեկտ. 10-ին, Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենայ Թիֆլիսցի հայազգի օրիորդ Թամարա Տէր-Ստեփանեանի կոնցերտը դաշնամուրի վրայ։ Օրիորդը վերջացրել է մեծ յաջողութեամբ կոնսերվատորեան և իւր կոնցերտի համար ընտրած կլասիկական կտորները ապացուցանում են թէ ինչպիսի լրջութեամբ է նա վերաբերւում գեղեցիկ արհեստին։ Կոնցերտի բովանդակութիւնը լաւ է կազմուած. լսողները շատ գովում են օրիորդին։

խնդիր կըտաք։

—Ես գրել չգիտեմ։

—Դա իմ գործը չէ. տեսէք, ես ձեզ կըհետևեմ... իսկ այժմ մնաք բարև։

Տէր Ռիվոլին անվճռականութեան մէջ վերադարձաւ տուն։ Նա գիտէր, որ իշխանութիւնն աղքատ մարդկանց հետ հանաք անել չի սիրում։ Ի՞նչ անէր։ Եթէ նա պատի նորոգութիւնը շարունակէ, յիսուն էկիւ տուգանք պէտք է տայ, եթէ նորոգութիւնից հրաժարուի - տուգանքը հարիւր էկիւի է հասնում։ Նրան թէ ստիպում են պատը նորոգել և թէ միևնոյն ժամանակ արգելում։ Երկու դէպքումն էլ նա մեղադրւում է, նա պարտաւորւում է վճարել։ Միտքը խառնւում էր և զգալով իւր ամենևին անօգնականութիւնը հայր Ռիվոլին դառնացած մտածում էր՝

—Իսկ մեր պատգամաւորն ինչ էր դուրս տալիս՝ թէ ես եմ իմ գլխի տէրը, ինչ ուզենամ, այն կանեմ... ոնց չէ, երևում է.

Հայր Ռիվոլին մի հարևան ունէր, որը այդ օրէնքները հասկանում էր, որին այդպիսի դէպքերում դիմում էին. սա նոյնպէս դիմեց իւր հարևանին։

Լսեց նա սրան և լուրջ դէմք բռնելով, ասաց՝

—Էլ ճար չկայ, հայր Ռիվոլի, պէտք է օրէնքին հնազանդուել։ Նրան ամբողջ աշխարհս հպատակւում է, որովհետև նա օրէնք է... այդ օրէնք է... Այդ այդպէս, իսկ որ դուք գրել չէք իմանում, դա մի մեծ ցաւ չէ։

Ես ձեզ համար խնդիր կըգրեմ թագաւորին, որ թոյլ տան ձեզ պատը նորոգել։

Խնդիրն ուղարկեցին։ Անցաւ երկու ամիս, իսկ թագաւորից պատասխան չկայ։ Թագաւորը շատ ուրիշ գործեր ունի, ինչ կայ շտապելու մի որ և է անյայտ աղքատի պատասխանելու. այն ինչ ճանապարհի պահապանը ամենայն ճըշտութեամբ ամեն շաբաթ կանգնում է Ռիվոլիի տան առաջ և հարցնում՝

—Հը՞, թոյլտուութիւնը ստացաք։

—Չէ դեռ։

—Դարձեալ խնդիր ուղարկեցէք թագաւորին։

Դարձեալ թուղթ են ուղարկում և դարձեալ թուղթը կորչում է սեղանի գերեզմանի պէս խաւար արկղում։ Թագաւորը միշտ ժամանակ չունի և խեղճ Ռիվոլին ի զուր անհամբեր սպասում է նամակաբերին, որը անհոգ անցնում է նրա մօտից։ Իսկ պատի բացուածքը շարունակ մեծանում է, քարերը, ծեփը անդադար թափւում են և դժբախտ պատը հետզհետէ աւերակ է դառնում։

Մի անգամ գիշերը սաստիկ քամի փչեց և, գը՜ռռ, պատն ընկաւ, քարերով ծածկելով ճանապարհը։ Առաւօտեան հէնց որ լուսացաւ, հայր Ռիվոլին նկատեց, որ պատը քանդուելիս վնասել էր և իւր մօտը տնկած պտղատու ծառերը, որոնք աշնանը լաւ պտուղ էին տալիս։ Նրա բնակարանն այժմ բոլորովին անպաշտպան է, գողերը ամեն մի րոպէ կարող են ներս խուժել և կողոպտել նրան ունեցած-չունեցածը... ճանապարհի պահապանն էլ, ինչպէս օրէնքի խիստ ուրուական, այստեղ է ու այստեղ։

—Ա՜, վերջապէս այս օրն էլ հասաւ, պատը քանդուեց... արձանագրութի՜ւն։

Ծերունին աշխատում էր ընդդիմախօսել։

—Ես ինչո՞վ եմ մեղաւոր։ Չէ՞ որ ես ուզում էի նորոգել, իսկ դուք ինքներդ ինձ խանգարեցիք։

—Այո, այո, խօսեցէք։ Է՜հ, վնաս չունի, մի մեծ բան չէ։ Յիսուն էկիւ առաջ, հարիւր էլ այժմ—հարիւր յիսուն էկիւ. կարծեմ կարող էք վճարել։

Բայց հայր Ռիվոլին չէր կարող վճարել։ Նրա ամբողջ կարողութիւնը շրջապատած մի փոքրիկ պարտիզից էր բաղկացած, ուր տնկած էին պտղատու ծառեր և ցանած էին բանջարեղեններ. ունէր նաև մի զոյգ ուժից ընկած դողդոջուն ձեռքեր։

Մռայլուեց ծերունին։ Ամբողջ օրերով գլուխը ձեռքերով սեղմած նստում էր սառը օջախի մօտ։ Երկու անգամ դատարանական պաշտօնեան այցելել էր նրան։ Առաջին անգամ նա տան միջի բոլոր շարժական իրերը կնքեց, իսկ յետոյ տունը և գետինը վաճառելու արձանագրութիւն կազմեց։ Մի շաբաթից բոլորը կըծախեն։

Ծերունի Ռիվոլին օջախի մօտից վերկացաւ, մտաւ մութ նրբանցքը, կողովների և դատարկ տակառների մէջ գտաւ մի հաստ պարան, որով տակառները ցած էր իջեցնում, և վեր բարձրացաւ։

Նրա պարտիզում մի ահագին ընկուզենի կար, նրա ամուր ճիւղերը տարածւում էին շուրջը, նորածին լուսինը աղօտ կերպով լուսաւորում էր ծառը։ Ռիվոլին սանդուխտը դրեց, բարձրացաւ ծառը, մի բարձր ճիւղից պարանը կապեց, միւս ծայրը փաթաթեց իւր վզին և թափով ընկաւ տարածութեան մէջ։ Ճիւղը թեթև ճռռաց... և ամեն բան լռեց։

Հետևեալ օրը նամակատարը բերեց թագաւորի թոյլտուութիւնը...

—Հայր Ռիվոլի, ո՞ւր էք. հայր Ռիվոլի...

Իսկ հայր Ռիվոլին այդ ժամին կախուած երերւում էր ծառի ճիւղերի մէջ, որտեղ թռչունները ինչ որ բան էին գեղգեղում։

Ս. Ճահվերդ.

Կիրակի, դեկտեմբերի 13-ին, երեխաներ խնամող Թիֆլիսի ընկերութիւնը երեխաների առաջին ապաստարանն է բաց անում Հաւլաբարում: Ապաստարանը տեղաւորուած կլինի Մելիք-Բէգլարեանների տան մէջ և սեղանատուն կունենայ:

—

Այս տարուայ յունուարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը, տասն ամսուայ ընթացքում, Անդրկովկասեան երկաթուղով ճանապարհորդել են ընդամենը 2.496,612 հոգի, որոնք այդ բանի համար վճարել են 164,823 րուբլի: Նոյն ժամանակամիջոցում փոխադրուած է ապրանք՝ 123.697,299 պուդ և խոշոր եղջիւրաւոր անասուն՝ 2,519 գլուխ, որոնց համար ստացուած է 13.083,771 րուբլի: Միւս աղբիւրներից ստացուած եկամուտը հասնում է 1.527,931 րուբլու, իսկ ընդհանուր եկամուտը տասն ամսուայ ընթացքում —16.226,527 րուբլի է:

—

Պ. Տիգրան Ղոնդաղսաղեանը Բագուից ուղարկել է խմբագրութեանս 50 րուբլի հինգ օրինակ «Նոր-Դար»-ի տարեկան գինը և թողնում է խմբագրութեանս տնօրինութեանը: Խմբագրութիւնս որոշելուց յետոյ կը հրատարակէ այդ մասին արած իւր կարգադրութիւնը:

—

Սամարղանդ-Անդիժանի երկաթուղու վրայ կանոնաւոր հաղորդակցութիւնը մտադրութիւն կայ բանալու առաջիկայ յունուարի 1-ից:

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—դեկտ. 1-ին Վեհ. Հայրապետը, Իւր մօտ կանչելով սենոդի անդամներին, յայտնեց Իւր որոշումը Թիֆլիս գնալու: Հետևեալ օրը վեհարանի առաջ և վանքի բակում խառն ժողովուրդ էր հաւաքուած: Օրուայ ժամը 2-ից վանքի զանգակները սկսեցին հնչել. միաբանութիւնը շարուած էր Իջման սեղանի առաջ, ճեմարանի աշակերտական խումբը շարուած էր վեհարանի մեծ դռնից մինչև վանքի զանգակատունը: Վեհափառը դուրս եկաւ վեհարանից Իւր հետ ունենելով Սարգիս և Արիստակէս եպիսկոպոսներին, դիւանապետին և այլոց: Նորին Օծութիւնը մտաւ տաճարը, Իջման սեղանի առաջ ծնկաչոք աղօթեց, երեքս համբուրեց ս. խաչն ու աւետարանը և օրհնեց միաբանութեանը: Եպիսկոպոսները, վարդապետները և սարկաւագները մի առ մի համբուրեցին Հայրապետի աջը և բարի ճանապարհ մաղթեցին: Դրանից յետոյ Վեհափառը դուրս եկաւ տաճարից: Ճեմարանի սաներն այժմ շարուած էին Տրդատեան դռնից մինչև պարսպի մեծ դուռը: Նորին Վեհափառութիւնն անցաւ նրանց շարքերի միջով և նստեց սպասող կառքը: Վեհափառին և իւր ուղեկիցներին Վաղարշապատից մինչև Փարաքար ճանապարհ դրին տանուտէրը, մի քանի տասնեակ կամաւոր ձիաւորներ և ձիաւոր—ոստիկաններ: Երևանում Հայրապետին դիմաւորեց փոխանորդ Տէր Ներսէս Արքեպիսկոպոսը: Հետևեալ օրը Նորին Օծութեան այցելեց նահանգապետը՝ Հայրապետի փոխ-այցը ստանալով նոյն օրը:

—Ճեմարան մտնելու համար Թիւրքիայից դարձեալ 6 հոգի եկան և ընդունուեցին

—

ԲԱԳՈՒԻՑ.—կիրակի, դեկտ. 6-ին, գիշերը, տեղացի հարուստ մի թուրք երիտասարդ կանխամտածած գնում է Թուրքերի մեծ ախունդի Նշանաւոր հոգևորական) տուն և դուրս կանչելով նրան, անմիջապէս ատրճանակի մի գնդակով սպանում է: Սպանութեան պատճառն այն է, որ մարդասպանը մի քանի անգամ ցանկութիւն է յայտնել ախունդի աղջկան կնութեան առնելու, սակայն վերջինս ամեն անգամ մերժել է: Ոստիկանութեան ձեռք առած խիստ միջոցների շնորհիւ, մի քանի ժամից յետոյ մարդասպանը ձերբակալուեց.

—Նոյն գիշերը անյայտ աւազակները մտնում են պ. Ա. Սանփանեանի պատրաստի հագուստի վաճառատունը, որը գտնւում է Բագուի ամենայայտնի փողոցում, Ս. Լուսաւորիչ եկեղեցու շարքում և բաւական թանգագին մուշտակներ և այլ հագուստեղէն են տանում: Թէև աւազակները անյայտ են, բայց և այնպէս մի քանի սրիկաներ ձերբակալուած են:

—

ՍԱԼԵԱՆԻՑ.—Հացահատիկների առատութիւն ներկայացնող այժմս ցորենի պ. վաճառւում է 1 ր. 20 կ. գարին՝ 80 կ. և թխած հացի փութը՝ 5—6 կոպ:

—

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Այս օրերս Եկեղ. հոգաբարձութեան նախագահ ընտրուեց Մատթէոս Խըլիթչեանը: Սա Բալաբանեանի քրոջ որդին է:

Սուքիաս սրբազանի գալստեան մասին ոչինչ լուր չունինք: Այժմ կասկածի մէջ ենք. կարելի որ սրբազանը չգայ:

Այստեղ ձիւն չկայ, եղանակը տաք է և խոնաւ: Այս աշնանը խանութատէրերն անսպառելի առևտուրներ արին. եղան օրեր, որ ամենափոքրիկ խանութպանն 4—5 հարիւր րուբլի փող հաւաքեց օրուայ վաճառումից: Գիւղացիների մօտ փողեր է երևում: Աժերը լաւ էր և հացաբոյսների գները բարձր էին:

Մեր քաղաքի թատրոնի նոր շինութիւնը շուտով վերջանալու վրայ է: Շատ գեղեցիկ շէնք է և տեղն էլ յարմար:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ՕԴԵՍՍԱՅՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին Օդեսայի Ազնուականների ժողովարանում տեղի ունեցաւ հայկական սալոնական երեկոյթը, որի մասին տեղական ռուս լրագրերը հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում: Ազնուականների ժողովարանի ընդարձակ դահլիճները հիացնում էին իրենց զարդարանքներով: Փոքրիկ դահլիճը ներկայացնում էր Արևելքի մի շքեղ «անկիւն»: Մուտքի մօտ շինուած էր մի ահագին կամար պարսկական, Դաղստանի և ուրիշ գործերից կազմուած: Ամբողջ յատակի վրայ նոյնպիսի գորգեր էին փռուած, որոնք զարմացնում էին իրենց բազմազան երանգներով ու ճամուկներով: Պատերից արևելեան ճաշակով կերպասներ ու զէնքեր էին կախուած: Շքեղ զարդարուած բուֆէտների գլխին խաչմերուկ ամրացրած էին Կովկասեան դաշոյններ, շրջապատուած ելէքտրական լամպարներով: Քիօսկի մէջ հայ օրիորդներ վաճառում էին Ախալցխայում պատրաստուած արծաթի իրեր, որոնք ձեռքից ձեռք էին խլւում: Գեղեցիկ զարդարուած էր հիւրասենեակը. մէջ տեղը Կախէթի կարմիր գինու շատրուան էր խփում. շատրուանը զարդարուած էր արևադարձային բոյսերով և էֆֆէկտով լուսաւորում էր ելէքտրական լամպարներով: Ներկայ եղողները շրջապատել էին շատրուանը և բաժակները լցնում էին գինով: Անկեանը շինուած էր մի շքեղ քիօսկ, ուր սազանդարներն ու դուդուկչիներն ազգային զանազան եղանակներ էին նուագում: Դիմացը, պատի վրայ աչքի էր ընկնում ծաղիկներով և ելէքտրական լամպաներով զարդարուած մի քնար: Նոյն այդտեղը շարուած էր արևելեան հարուստ կահկարասի, թախտեր մութաքաներով, որոնց վրայ դարսուած էին հայկական երաժշտական գործիքներ և թառեր, սանթուրներ, նաղարա, դայրա և այլն: Երեկոյեան ժամը 8-ին սկսեցին հաւաքուել հիւրերը: Կարգադրիչ-ուսանողները պատրաստակամ սիրելութեամբ ընդունում էին եկողներին: Կոնցերտի բաժանմունքում մասնակցում էին օպերային երգչուհիներ՝ Սիբերի, Մոնտի-Բրունէր և այլն, պ. Դադդի և ուրիշ շատ անձեր: Կոնցերտից յետոյ ներկայացուեցան կենդանի պատկերներ՝ «Հարսնացուի առևանգումը փեսացուի ձեռքով, որին մերժել են աղջկայ ծնողները», «Հայ աշուղը երգ է երգում իւր շուրջը հաւաքուած գիւղացիների առաջ» և այլն: Այնուհետև տեղի ունեցաւ երգեցիկ խմբի անդամների թափօրը, որոնք հայկական ազգային շորեր ունէին հագած: Պարահանդէսը սկսուեց լեզգինկայ և ազգային խմբական պարերով, որոնք խիստ դուր եկան հասարակութեանը:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ ԲԱԳՈՒՈՒՄ

«Խանդոտ և Պարիզի շըջմոլիկը»

—

Ամսոյս 28 ին երկրորդ անգամ ներկայացուեց «Վերաքննիչը»: Այս անգամ տաք ընդունելութիւն չունեցաւ: Բազմութիւնը ցանցառ էր, որ կարծես ազդում էր դերակատարների տրամադրութիւն ների վրայ:

Չարաթ, ամսոյս 5-ին, հայ բեմը արժանացաւ վայելել երկու կատակախաղեր, որ ընտրել էր օր. Մարի-Հրանոյշ իւր նպաստի համար: Քիչ անգամ ենք ճաշակած այն կուշտ հաճոյքը, ուր այդ երեկոյ ունեցանք հանդիսատես լինելով «Պարիզի շըջմոլիկի» և «Խանդոտի» ներկայացմանը: Լիայագուրդ խնդումն ամեն ինչ մոռացնելու աստիճան տիրում էր մեր վրայ, ունկնդիր լինելով ֆրանսական նրբամիտ և սրամիտ սոյն երկու պիէսներին: Այս այն խնդը չէ, որ յառաջ է գալիս տեսարանների կոշտ հանգիստաղութեամբ. այլ այստեղ ամենը անակնկալ էր, ամենը համեմուել էր սրախօսութեամբ չարաճճի և սիրուն զրուցատրութեամբ: Բայց այդ հաճոյքը մեզ պատճառողը նոյն իսկ նոյն երեկոյեան դիւցազնուհին էր, դերասանական խմբի ամենահամակրելի, ամենաերիտասարդ և ամենակրակոտ դերասանուհին, օր. Մարի-Հրանոյշը: «Պարիզի շըջմոլիկը», որ տաղանդաւոր դերասանուհին անման էր, և որ նոյն իսկ Պարիզեան բեմին մեր հայ արուեստագիտուհիների երեսը պիտի սպիտակեցնէր, այդ երեկոյ մի փառքի պսակ էլ աւելացրեց իւր մատաղ ուսերի վրայ: Հասարակութիւնը նրանով խանդավառ էր: Ինքնաբերաբար միացան ի նուիրեցին նրան նոյն իսկ Պարիզի շըջմոլիկի նկարը, որ նուէրներից ամենից թանկագինը պէտք է համարել իբր յիշատակ նոյն դերում տարած յաջողութեան: Այն եռանդը, կորակը, աւիւնը, որ Պարիզի փողոցի այդ չարաճճի, այլ բարի սառահակը ցոյց է տալիս իւր քրոջը և ուրիշներին օգնելու համար, այնքան նկարագեղ, իրական էր, որ յարգելի դերասանուհուն հրաշակերտ կարելի է համարել: Տեղական հայ մամուլն արդէն մի քանի տարի առաջ գնահատել էր նրա ձիրքերը մանրամասնաբար այդ դերում և մեծ ապագայ էր ակնկալում: Յուսով ենք, որ օրիորդը կարդարացնէ այդ ակնկալութիւնները:

Խանդոտը նախանձոտ կինն է, որ իւր ամուսնու վրայ կասկածում է չարունակ և բոլոր տղամարդկանց ընդհանրապէս: Յաջողում է որոմ ցանել իւր ազգակիցների ընտանիքների մէջ, նոյն իսկ իւր հօր և մօր միջև: Յետոյ պարզւում են նախանձի հետևանքների անախորժ տեսարանները և ընդհանուր հաշտութեամբ ու ընդհանուր համբոյրների մէջ վերջանում է զաւեշտախաղը: Ծայրից ծայր հետաքրքրութիւնը չէ դադարում, անակնկալներն անվերջանալի են և մեր լիարդներն էլ միասին յագուրդ են ստանում դրանով:

Խանդոտի դերն էր կատարում բենեֆիցիանտ օրիորդը. յաջող կերպով տարաւ տեղ-տեղ կասկածոտ, սիրող, ծիծաղող, ներող և հեգնող դերի զանազան մասերը: Իսկ նոյնը չպիտի կարող լինինք ասելու իւր ամուսնու դերը կատարող պ. Արաբսեանի մասին, որ բոլորովին իւր տեղումը չէր: Պ. Պետրոսեանի յատուկ այդ դերը երևի սխալմամբ նրան էր վիճակուել:

Դերասանական հայ խումբը, որ իւր անդամների առատութեամբը փայլում է, այդ երեկոյ մի զարմանալի պակասութեան երևոյթ էր պարզում: Օր. Վարդիթեր երեք տարբեր դեր էր կատարում: Տասնուվեց տարուայ հարսի դերն ընկել էր օր Գարագաշի վիճը: Մեզ համար հանելուկ է թէ ինչ է գործում բեմի ներքնակողմում և ինչու այդքան տարօրինակ տեսարաններ հանդէս են բերում:

Հայ լեզուն բարեփոխւում է թէ չարափոխւում: Ոչ մի հայ բառարան, ոչ մի հայ քերականութիւն մինչև հիմայ նախանձոտը կամ կասկածոտը չէ շփոթել եռանդոտ բառի հետ: Գաղտնիք է թէ ինչպէս Խանդոտ, որ կրակոտ է նշանակում, ժողովրդի լեզուի մէջ ըմբռնում է իբր նախանձոտ և նոյն իմաստով բեմ են հանում:

Օր. Մարի-Հրանոյշ, իւր մեծադիր նըկարից դուրս ստացաւ իւր յարգողների կողմից արծաթեայ մի յիշատակարան և փոքրադիր պատկերը յախճապակու վրայ նկարուած, որ բարձիկի վրայ ընծայուեց նրան:

Հ. Նազար

Բագու, 6 դեկտեմբերի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 նոյեմբերի.—Մինչ կարճ ժամանակ առաջ ողջունում էինք «Ժողովրդական համալսարանների»-ի բացումը, ուր ամեն մարդ, առանց սեռի և հասակի խտրութեան կարող է ուսում և կրթութիւն ստանալ, ուսումնասիրել իւր սիրած մասնագիտութիւնը, այժմ էլ շուտով սկիզբն է դրուելու «Ընտանեկան համալսարանի» գործին: Պետերբուրգում ռուս գրական շրջաններում ծանօթ անձն՝ Փ. Ս. Կամարովսկին ձեռնարկել է հրատարակելու «Ընտանեկան համալսարան» („Семейный университетъ") խորագիրը կրող մի շարք դասախօսութիւններ: Պարզ, հանրամատչելի կազմութեամբ, մաս առ մաս լոյս տեսնելով «Ընտ. համալսարանի» նպատակն է, ինչպէս խորագիրն էլ ցոյց է տալիս, ընտանիքներում տարածել ուսում և գիտութիւն, ինքնակրթութեամբ պարապողներին և այն շատերին, որոնք հնար չեն ունեցել բարձրագոյն կրթութիւն ստանալ, միջոց տալ հիմնովին ծանօթանալու այն մասնագիտութիւնների հետ, որոնք առհասարակ աւանդւում են համալսարաններում: Հրատարակիչը մտադիր է չորս կուրսի (դասընթացքի) բաժանել «Ընտ. համալսարանը»: Ամեն մի կուրսը բաղկացած կլինի հինգ բաժանմունքից որ մաս-մաս լոյս կտեսնի տարուայ ընթացքում:

«Ընտ. համալսարանի» ծրագիրը հարուստ է. մասնակցում են իւրաքանչիւր բաժնում նիւթին և գործին քաջ ծանօթ մարդիկ: Բացի ֆիզիկայի քիմիայի, կենսաբանութեան (biologia), փիլիսոփայութեան, իրաւաբանութեան, քաղաքակրթութեան պատմութեան և գրականութեան ընդարձակ բաժանմունքներից «Ընտ. համալսարանը» խօսք կունենայ այն բոլոր առարկաների մասին, որոնք վերաբերում են ընդհանուր զարգացման գործին: Առանձնապէս ուշադրութիւն պիտի դարձուի բժշկականութեան և գլխաւորապէս կանացի և մանկական հիւանդութիւնների վրայ:

«Сем. университетъ»-ը զարդարուելու է բազմաթիւ նկարներով և խրոմոտիպ պատկերներով: Մի կուրսը բռնելու է ոչ պակաս 1650 մեծադիր, մանրագիր երեսներ իսկ ամեն մի պրակը (выпускъ) մօտ 320 երես:

«Ընտանեկան համալսարանի» առաջին կուրսի առաջին պրակը շուտով լոյս կը տեսնի. ահա ինչ դասախօսութիւններից է կազմուած նա. 1) ֆիզիկա, 2) քիմիա, 3) աստղաբաշխութիւն, 4) ֆիզիքական աշխարհագրութիւն, 5) երկրաբանութիւն (geologia), 6) բուսաբանութիւն, 7) կենդանաբանութիւն, 8) մարդակազմութիւն, 9) բնախօսութիւն (physiologia), 10) հոգեբանութիւն, 11) տրամաբանութիւն, 12) քաղատնտեսութիւն: Առաջին կուրսի հետևեալ բաժինները լոյս կը տեսնեն մինչև 1899 թ. հոկտեմբեր ամիսը:

Անել հարկաւոր է որ «Ընտանեկան համալսարանը» գրկաբաց պիտի ընդունէ ամեն մի ընտանիք, որ սիրում և հետաքրքրւում է ուսումով և գիտութեամբ: Եւ այդ դժուարին ու պատասխանատու գործի յաջողութիւնը կախուած է ստորագրողներից, այսպէս ասած «Ընտ. համալսարանի» ուսանող-բաժանորդներից: Տարեկան (մի կուրսը, 5 պրակ) արժէ ամեն տեղ 12 րուբլի: Կարելի է վճարել և մաս մաս:

Գօշ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԷՄ.—«Rhein. Wesrf. Zeit.»-ին Հռոմից գրում են. «Անիշխանականների դէմ գումարուած կոնֆերենցիայի աշխատանքները գաղտնի պահելն այնքան հեռու է գնում, որ թագցնում են մինչև անգամ կոնֆերենցիայի անդամների բնակութեան տեղը: Դրա նպատակն այն է, որ պետութիւնների պատգամաւորներին ազատ պահեն անիշխանականների կողմից լինելիք անախորժութիւններից, այլ և լրագրական ռեպորտեօրների դահլա տալուց: Այն շէնքը, որտեղ նիստեր ունի կոնֆերենցիան, աչալուրջ կերպով պահպանւում է գաղտնի ոստիկաններով, որոնք հսկողութիւն ունին նաև շրջակայ տների վրայ: Սակայն, չնայելով այս գաղտնապահութեանը, կոնֆերենցիայի նիստերի մասին յայտնուեցաւ հետևեալը. Անգլիան կոնֆերենցիային համաձայնութիւն յայտնեց մասնակցելու այն պայմանով, որ եթէ այնպիսի որոշումներ ընդունեն, որոնք կարող են հակառակ լինին իւր օրէնսդրութեանը, այն ժամանակ նա իրեն գործողութիւնների ազատութիւն կըվերապահի: Մինչդեռ կոնֆերենցիայի ընթացքը նրան ստիպեց երրորդ պատուիրակն ուղարկելու կոնֆերենցիային, որովհետև նա չէր կարող այլ ևս պնդել իւր սկզբում դրած պայմանի վրայ, երբ կոնֆերենցիան միաձայն որոշեց, որ իւրաքանչիւր պետութեան ներքին օրէնսդրութիւնը պէտք է փոփոխուի, եթէ հակառակ կըլինի կոնֆերենցիայի որոշումները գործադրելուն: Սակայն, այդ կէտը եռանդուն հակաճառութիւնների առիթ տուեց. մանաւանդ շատ առարկութիւններ արին Ֆրանսիական պատուիրակները: Աւելի համաձայնութեամբ ընդունուեց բոլոր պետութիւնների մէջ ոստիկանական ծառայութիւնը փոփոխելուն վերաբերեալ որոշումը: Այդ փոփոխման համաձայն, այսուհետև բոլոր անիշխանականները կարտաքսուեն այն պետութիւններից, որոնց հպատակ չեն, և բռնութեամբ կըփոխադրուեն իրենց հայրենիքը: Այս դէպքում գործելու եղանակը մշակուած է կատարելապէս որոշ կերպով և միանման կըլինի բոլոր պետութիւնների համար»:

—

ԹԻՒՐՔԻԱ.—«Daily News»-ի Օդեսայի թղթակիցը հաւաստացնում է, որ թիւրքական հեծելազօրի թիւը անմիջապէս կաւելացնուի 25,000 հոգով: Այդ բանը իբր թէ տեղի է ունենալու Վիլհելմ կայսրի խորհրդով: Իւր հաղորդած այդ լուրը հաստատելու համար թղթակիցն ապացոյց է բերում այն հանգամանքը, որ Թիւրքիան ներկայումս մեծ թուով ձիեր է գնում հարաւային և միջին Ռուսիայում:

—Բեռլինի լրագրների ասելով, օսմանեան կառավարութիւնը Կրուպպի գործարանին պատուէր է տուել հազար աբազաձից Թնդանօթ պատրաստելու ռըմբաձիգների համար։

—

ՖՐԱՆՍԻԱ.—Պարիզի մի քանի լրագիրները հաղորդում են, թէ Դրայֆուսը Եւրոպա կուղարկուի դեկտեմբերի 28-ին (յունուարի 9-ին)։ Ինչ վերաբերում է Էստերհազիին, այժմ այլևս տարակոյս չկայ, որ նա Ամստերդամից, ուր նա ապրում է վերջին ժամանակս կեղծ անունով, այս օրերս կը մեկնի Ամերիկա։

—«Hibre Parole»-ի մէջ հրատարակուած է Էստերազիի մի նամակը, որ ուղղել է վճռաջինջ ատեանի աւագ նախագահ Մանոյին։ Այդ նամակի մէջ Էստերհազին յայտարարում է որ եթէ պաշտօնապէս երաշխաւորութիւն կըտըրուի իրեն, որ ինքն ազատ կըլինի, ինքն ապատճառ կը գայ կը ներկայանայ վճռաջինջ ատեանին ցուցմունքներ և և բացատրութիւններ տալու բոլոր կէտերի վերաբերմամբ։

—Թէև վերջին միտինգների ժամանակ ծանր ընդհանրումներ տեղի չունեցան, բայց և այնպէս կառավարութիւնն անհրաժեշտ է ճանաչել զսպելու չափազանց գրգռուող կրքերը։ Այդ նկատմամբ վճռուած է, որ այսուհետև բոլոր համախմբումների ժամանակ պաշտօնապէս ներկայ լինի ոստիկանական մի կոմիսար, որին կըյանձնարարուի պահպանել յարգանքը դէպի կարգն ու օրէնքը։

Այժմ յուզումներ ու կռփամարտներ տեղի են ունենում գաւառում։ Այս օրերս մի կատարեալ տուրուդմփոց տեղի ունեցաւ Մարսէլում, իսկ այժմ Նանսիից հեռագրում են, որ այնտեղ եղած համախմբումը վերջացաւ մի կատաղի կռուով, որի ժամանակ մի քանի հոգի ծանր կերպով վիրաւորուեցին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աւտոմատ-բժիշկ.—Ամստերդամի փողոցներում հանդէս է եկել մի նոր ինքնուրոյն աւտոմատ գրեթէ բոլորովին մերկ մարդու ձևով, որի ամբողջ մարմինը գծերով փոքրիկ մասերի է բաժանուած. Իւրաքանչիւր մասի վրայ գրուած է այս կամ այն թեթև հիւանդութեան անունը։ Իւր մարմնի մէջ մի որևէ տկարութիւն զգացող մարդը գնում է աւտոմատի մօտ, որոնում է նրա մարմնի վրայ իւր տկարութիւնը համապատասխանող տեղը և, այդ տեղի վրայ գտնուած մի առանձին բացուածքի մէջ դրամ ձգելով, ստանում է հարկաւոր դեղը։ Իսկ եթէ հիւանդութիւնը քիչ-շատ լուրջ բնաւորութիւն ունի, այն ժամանակ դեղի տեղ աւտոմատի միջից դեղատոմս է դուրս գալիս դեղատնից հարկաւոր տեղը ստանալու կամ թէ այս կամ այն մասնագէտ բժշկի հասցէն։

—

Բանաստեղծներ։

—Մի՞թէ չես կարող պարզ գրել։

—Պարզ որ գրեմ, աւելի շուտ կըվերադարձնեն խմբագրատներից իմ ձեռագրերը։

Բժիշկն եկաւ։

—Ի՞նչպէս քնեցիք։

—Շատ վատ։

—Բայց չէ՞ որ ես ձեզ կաթիլներ տուի անքնութեան դէմ։

—Հենց դրա համար էլ ամեն մի ժամից զարթեցնում էին ինձ, որ այդ կաթիլները խմեցնեն։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ. 8 դեկտեմբերի,—Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը, սուլթանի հրաւէրով, կըմնայ այստեղ մինչև հինգշաբթի։

ՍՈՖԻԱ. Ռադոսլաւովի կողմնակիցները երեկ միտինգ գումարեցին բողոքելու արևելեան երկաթուղիները գնելու դէմ։ Մի որոշում է ընդունուած, որով պահանջւում է պաշտօնից արձակել մինիստրութիւնը, որովհետև յիշեալ երկաթուղիները գնելով երկիրը վտանգների է ենթարկւում։ Ռադոսլաւովն իւր կողմնակիցների հետ դիմեց դէպի պալատը, որոշումը իշխանին յանձնելու համար։ Ճանապարհը փակող ոստիկանութեան վրայ սկսեցին քարեր նետել, որի ժամանակ վիրաւորուած են երկու ժանդարմ։ Ամբոխի միջից լսւում էին «կորչի՜ կառավարութիւնը։ Կեցցէ՜ Իշխանը»։ Ցուցարարները ցրուեցին. Նրանցից 12 հոգի ձերբակալուած են։

ՊԱՐԻԶ.—Պատգամաւորների ժողով։ Հակահրէական Լազիեսը հարցապնդում է անում Դրայֆուսի գործի առթիւ, որի ժամանակ մեղադրում է Բրիսսոնին սահմանադրութիւնը խախտելուն համար։ Այնուհետև ճառախօսը յարձակւում է գործում վճռաջինջ ատեանի վրայ, որի նախագահի եղբայրը, գերմանական պաշտօնեայ Լեօվը, ձգտում է Դրայֆուսին ազատել ապաթէօզով։ Այդ խօսքերն եռանդուն բողոքներ են յարուցանում։ Ճառախօսն ի կարգ է հրաւիրւում։ Ի վերջոյ Լազիեսը յայտարարում է, որ Դրայֆուսի և Պիկարի գործերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ առիթներ զօրքի վրայ յարձակւում գործելու, ուստի Ֆրէյսինէին առաջարկում է պաշտպանել զօրքը։ Ֆրէյսինէն ամբիօն է բարձրանում և պատասխանում է, որ գործը, յանձնուած է վճռաջինջ ատեանի քննութեանը։ Հետևաբար, զինուորական մինիստրութիւնը չպէտք է այնպէս վարուի, որ կարծեն, թէ նա մտադիր է ազդել ատեանի որոշման վրայ։ Մինիստրը վճռաջինջ ատեանին կըհաղորդի իւր ձեռքի տակ գտնուած բոլոր դոկումենտները, բայց միայն երկրի պաշտպանութեան շահերի սահմանում։ Նա չի հաղորդիլ ոչ մի դոկումենտ, որի հրապարակ հանելը կարող էր վերաբերել պետութեան պաշտպանութեանը։ (Ծափեր)։ Եթէ պատգամաւորների ժողովը համաձայն չէ այս տեսակէտին, նա պատրաստ է հրաժարուել իւր պաշտօնից։ Մորֆորը հարցնում է, թէ վճռաջինջ ատեանը ինչպէս պէտք է գաղափար կազմէ—դոկումենտը վճռական նշանակութիւն ունի՞, թէ չունի։ Ֆրէյսինէն պատասխանում է , որ վըճռաջինջ ատեանի ձեռքին գտնուած պաշտօնական դոկումենտները զինուորական այժմեան մինիստրին յայտնի չեն. նա այդ դոկումենտները երբէք չի տեսել և իւր ձեռքի տակ ունի միայն այն, ինչ որ գաղտնի dossier է կոչւում։ Այդ dossier-ի մէջ կան դոկումենտներ, որոնք կարող են շօշափել պետութեան ապահովութիւնը։ Այդ դոկումենտները մինիստրը կըհաղորդի այն դէպքում միայն եթէ անպայման վստահ կըլինի, որ նրանք հրապարակ չեն հանուիլ։ (Ծափեր)։ Լազիեսն ասում է, որ այդպիսի պայմաններում վերաքննութիւնը մի կոմեդիա է հանդիսանում և շնորհակալութիւն է յայտնում մինիստրին պաշտօնական պարզ բացատրութիւններ տալուն համար։ «Այժմ ապացուցուած է, որ գաղտնի dossier-ն գոյութիւն ունի, ուստի հարցապնդումս յետ եմ առնում»։ (Ծափեր)։

ՍՈՖԻԱ.—բուլղարական բազմաթիւ քաղաքներ, ընկերութիւններ և մասնաւոր անձեր Թագաւոր Կայսրին, Մեծ Իշխանին և ռուս եղբայրական ազգին հեռագրներ ուղարկեցին իրենց անձնուիրութիւնն ու շնորհակալութիւնը յայտնելով ազատութեան պատերազմի համար։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Միխայիլովկա.—Գ. Մ. Տ. Ս.-ին, Դուք կարդացել էք «Նոր-Դար»-ի յայտարարութեան բաժնում Չմշկեանի պատի օրացոյցի յայտարարութիւնը և գանգատւում էք, որ հրատարակիչը գնողներին շտապեցնում է, իսկ ինքը ուղարկելու չէ շտապում։ Ցայտարարութիւնների բաժնում տպուածին պատասխանատու չէ խմբագրութիւնը։ Դուք ձեր գանգատներով դիմեցէք իրեն օրացոյց հրատարակողին, որի բացատրութիւնը դուք պիտի ստանաք և ոչ խմբագրութիւնս։

Հաղբուժ.—Գ. Վ. Թում.-ին։ Ստացանք մեզ հասանելի 10 րուբլին։ Եկող տարուայ բաժանորդագինն էլ ժամանակին ուղարկեցէք։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 *Բագուից Թիֆլիս* մեկնում է օրուայ 4 ժ. 15 ր., հասնում է Թիֆլիս առ. 8 ժ. 38 ր. մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 20 ր., հասնում է Բաթում եր. 8 ժամին 52 ր.

Փոստային գնացքը № 3 *Բագուից Թիֆլիս* մեկնում է գիշ. 10 ժ. 50 ր., հասնում է Թիֆլիս եր. 5 ժ. 9 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 6 ժ. 10 ր., հասնում է Բաթում առ. 7 ժամին

Մարդատար գնացքը № 2 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* առ. 8. ժ. 30 ր, հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 30 ր., մեկնում է *Թիֆլիսից Բագու* եր. 9 ժ. 15 ր., հասնում է Բագու օրուայ 1 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* եր. 8 ժ. 40 ր., հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 55 ր., մեկնում է *Թիֆլիսից Բագու* առ. 11 ժ. 20 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 42 րոպէին։

—

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլեթում և հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկավկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 3 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկավկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող 1 կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԴՈԿ. Գ. Ս. ՀԵՐՑՖԵԼԴ

որ իւր մասնագիտութիւնը պարապել է Վիեննայում, ընդունում է կաշուի, վեներական, միզական և սիֆիլիտիկական հիւանդութիւններ ունեցողներին՝ ամեն օր առաւօտեան 9—11 ժամը և երեկոյեան 5—8 ժ.։ *Մադաթեան փողոց*, № 5, *Լիսիցեւի տուն։*

—

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Չունևորները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գրասենեակում վաճառւում են՝

	ր.	կ.
Ազաթանգեղոսի պատմութիւնը	1	»
Ստեփաննոս տարօնեցու պատմութիւնը	2	»
Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը	1	50
Ղեւոնդ պատմագիր	2	»
Դասագիրք կրօնի ուսուցիչների համար	1	75
Ժամանակագրութիւն հայոց Դարտելի	1	25
Հանրամատչելի բնախօսութիւն Լունկեվիչի	1	»
Հանրամատչելի աստղաբաշխութիւն Ֆլամմարիօնի	1	»
Քննական պատմութիւն հայոց Դարգազչեանի	4	»
Պատմութիւն հայոց, Պալասանեանի	1	50
Ակնահնութիւնք, Ճանիկեանի	2	»
Մանկական լօտօ, (հայ., ռուս., ֆրանսերէն և վրացերէն)	1	20
Ազգային Չօջեր, Պարոնեանի	1	»
Դաւիթ Կօպպերֆիլդ, Դիկկենսի	1	»
Վէպիկներ և զրոյցներ, Մօպասանի	1	»
Ցո՞ երթաս, Սենկեվիչի	1	50
Մարդ եմ, Էրկսի	1	»

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общ.
Изд. Армянскихъ книгъ. 50—36

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՈՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Ֆիսհարմոնիումներ, ջութակներ կիթառներ, ֆլէյտներ, կլառնետներ, ձայնախազեր, լարեր և այլն և այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս.

ՆՈՐ-ՊՐԵՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐՆ
ՈՒՂԱՐԿՒՈՒՄ ԵՆ ՁՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱԶԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
Б. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ УЛ.
36—34

ԿԱՐՈՒՁԵՒԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Աւարտել եմ տիկ. Դեմենտիևայի կարուձևի դպրոցը **ԱՏԵՍՏԱՏՈՎ** և ցանկանում եմ ունենալ աշակերտուհիներ։ Ուսուցման շրջանն արժէ միայն **15 ՌՈՒԲԼԻ**։ Հասցէն՝ Չուղուրէթ, Կողոպողեսկայա փողոց, տուն Սարիբէկովի, № 15։ 20—17

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ ս. Կարապետի ձորի վրայ, Հաւլաբարի 7-րդ քաղաքամասում, գտնուած կամուրջը նորոգելու պատճառով, երթևեկութիւնն այդ կամրջի վրայ կը դադարեցնուի, մինչև որ առանձին կարգադրութիւն լինի։
(1139) 3 2

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1899 ГОДЪ

НА ГАЗЕТУ

„КАСПІЙ"

(XIX ГОДЪ ИЗДАНІЯ).

Въ 1899 году „Каспій", въ Баку, ежедневно, будетъ выходить по прежней программѣ газеты литературной, общественной и политической, съ обширнымъ нефтянымъ отдѣломъ, **при той же самой подписной цѣнѣ.**

— ПОДПИСНАЯ ЦѢНА: —

Съ доставкой: на 12 мѣс. 7 р, на 11 мѣс.—6 р. 50 к., на 10 мѣс.—6 р., на 9 мѣс.—5 р. 50 к, на 8 мѣс.—5 р., на 7 мѣс.—4 р. 50 к., на 6 мѣс. —4 р., на 5 мѣс.—3 р. 50 к., на 4 мѣс.—3 р., на 3 мѣс.—2 р. 50 к., на 2 мѣс.—2 р. и на 1 мѣс.—1 руб. 50 к.

— ЗА ГРАНИЦУ: —

На годъ — — 13 руб.
» полгода — — 7 руб.

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится не менѣе 3 руб городскими и 4 руб. 50 коп. иногородными подписчиками; затѣмъ 15-го февраля 2 р. и 15 го марта 2 р.

Иногородные адресуютъ свои требованія, въ Баку, въ редакцію газеты „Каспій".

Подписка принимается: въ Баку —въ конторѣ газеты, Николаевская улица домъ Г. З. А. Тагіева; въ Тифлисѣ —въ книжн. магазинѣ Хиддекеля и У И. К Словинскаго: въ Кутаисѣ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ собора на Тифлисской ул., собственный домъ; въ Батумѣ — при книжно-газетномъ агентствѣ М. Николадзе; въ Елисаветполѣ у Г. А. Альтгаузена, при его торговлѣ антекарскими товарами; въ Москвѣ - въ конторѣ Мэтцль; въ Н.-Новгородѣ въ Рождественскомъ газетномъ кіоскѣ и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ столицъ и провинціи.
(Ф.) 3—2

Дозв цензурою. Тифлисъ, декабря 9 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387